ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Հասարակական գիտություններ № 9, 1962 Общественные науки

Հ. Մ. Եգանյան

ՈՌՈԳՄԱՆ ՊՐՈԲԼԵՄԸ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԻՐԱՆՈՒՄ

Հողագործությունն Իրանում տեղումների և ջրառատ գետերի պակասի պատճառով կարիք է զգում արհեստական ոռոգման։ Զագրոսի և Էլբուրսի լեռները և նրանց ծավալումը գեպի հարավ ու արևելք պատնեշում են Միջերկրականից եկող քամիները, որի հետևանքով Իրանի կլիման չոր է և քիչ տեղումներով։ Պարսից ծոցի ափերում տարեկան լինում են 350 միլիմետր տեղումներ, ուստի այդ շրջանի հողերը չոր են և անբերրի։ Բացառություն են կազմում միայն Կասպից ծովի հարավային ափերը, որտեղ տեղումները հասնում են 1300 միլիմետրի[1]։

Երկրի կենտրոնական մասում ընկած է ընդարձակ աղի անապատ, որը գյուղատնտեսական ոչ մի նշանակություն չունի[2]։

Իրանական «Էթթելաաթ» թերթը 1960 թ. հոկտեմբերին գրում էր, որ վերջին ուսումնասիրությունների տվյալներով, տեղումների տեսակետից, Իրանը կարելի է բաժանել չորս շրջանի։ Առաջինը այն շրջանն է, որտեղ տեղումները 600 միլիմետրից ավելի են և մինչևիսկ 1200 և 1800 միլիմետրի են հասնում (ինչպես, օրինակ՝ Մազանդարանում և Գիլանում), երկրորդ շրջանում լինում են 300—600 միլիմետր տեղումներ, երրորդ շրջանում՝ ավելի քիչ, իսկ չորրորդ շրջանը՝ անապատներ են, որտեղ տեղումները նվազագույն են[3]։

Այսպիսով, բացի հյուսիսային որոշ նահանգներից, համարյա ամբողջ Իրանում հողագործությունը խիստ կարիք է զգում արհեստական ոռոգման։ Գյուղերի մեծությունը և բնակչության խտությունը մեծ մասամբ կախված է ջրի քանակից։ Այն տեղերում, որտեղ ջուրն առատ է, շատ են նաև մշակվող հողերը, մեծ թվով գյուղեր կան, իսկ անջուր վայրերում հարյուրավոր կիլոմետրերի վրա բնակչության չենք հանդիպում։ Ուրեմն ջուրը Իրանի գյուղատնտեսության խոշոր պրոբլեմներից մեկն է և հենց այդ պատճառով, ինչպես հետագայում կտեսնենք, ագրարային հարաբերությունների մեջ մեծ դեր է խաղում։ Նշենք թեկուզ այն փաստը, որ բերքի բաշխման գործում ջուրն էլ հողի, անասունների, սերմացուի և աշխատուժի հետ հավասար հինգ հիմնական տարրերից մեկն է համարվում։

---

[1] „The Fortnightly", 1952 Feb. № 1022, p. 100.

[2] „La Documentation Française", L'Iran et son Economie, 28 Dec. 1959, p. 4։ *Այս աղբյուրում նշված է, որ երկրի մեկ երրորդ մասում տեղումները կազմում են ավելի քան 400 միլիմետր, մյուս երրորդում՝ 200—400 միլիմետր, իսկ վերջին երրորդում՝ 200 միլիմետրից պակաս։*

[3] (اطلاعات) *«Էթթելաաթ», 1960 թ. հոկտեմբերի 2։*

Արհեստական ոռոգումը Իրանում կիրառվում է հնագույն ժամանակներից։ Հենց այդ ժամանակներից սկսած առանց լուրջ փոփոխությունների գոյություն ունի ոռոգման երկու հիմնական սիստեմ՝ վերերկրյա և ստորերկրյա։ Առաջինը գետերն են, առուները, կամ ջրանցքներով հոսող նրանց ջրերը, երկրորդը՝ ստորերկրյա ջրերն են, որոնք օգտագործվում են հորերի, քահրիզների կամ ղանաթների (ստորերկրյա ջրանցքներ) միջոցով։

Վերերկրյա ջրերը Իրանում քիչ են, սահմանափակ հոսունությամբ և առանձնապես պիտանի չեն ոռոգման նպատակների համար։ Հարավում միակ գետը, որը պիտանի է ընդարձակ ոռոգման համար՝ Քարուն գետն է, որի ջրերը ջրանցքներով տարվում են մինչև Ագիլի դաշտավայրը, հյուսիսային Շուշտար և Միանե՝ նրա հարավում։ Քարխեհ և Ջարահ գետերի ջրերը նույնպես օգտագործվում են բրնձի, արմավի, մասամբ էլ հացահատիկի ցանքսի համար։

Հյուսիսում ոռոգման տեսակետից քիչ կամ շատ կարևորություն ունեցող գետերն են Արաքսը, Սեֆիդոուդը, Գարգանը և Արրադը։

Որոշ տեղերում, ստորերկրյա ջրերի մակարդակը համեմատաբար բարձր լինելու պատճառով, ոռոգումը կատարվում է հորերի միջոցով։ Հորերից ջուրը հանվում է երեք հիմնական ձևով։ Նախ՝ կաշվե ամանի միջոցով, որը պարանով կախվում է հորի մեջ և կենդանիների օգնությամբ դուրս քաշվում։ Երկրորդ՝ օգտագործվում է ջրակիր անիվ, որը պտտվում է անասունների օգնությամբ։ Երրորդ՝ հակակշիռային, որն ընդունված է ամբողջ Մերձավոր Արևելքում և Հնդկաստանում։ Դա մի երկար փայտ է, որի մի ծայրում ման է կախված, իսկ մյուս ծայրում՝ որևէ ծանրություն։

Հորերի ջրով ոռոգման կարելի է հանդիպել երկրի բոլոր մասերում՝ հատկապես Խուզիստանում, Ֆարսում, Սպահանում, Արևելյան Իրանի որոշ մասերում և Ռիզաիյե լճի ափերում։ Կարարուլաղում հողի մշակումը հիմնականում կատարվում է հորերի ջրով։

Իրանում արհեստական ոռոգման ամենատարածված ձևը ղանաթն է։ Ըստ որոշ տվյալների ամբողջ Իրանի ոռոգման 75 տոկոսը կատարվում է այս եղանակով[4]։ Ստորերկրյա ջրերը, որոնք երկրի մակերևույթից տասնյակ մետր խորության վրա են, ստորերկրյա ջրանցքների միջոցով դուրս են բերվում դաշտերը։ Ոռոգման այդ սիստեմը կիրառվում է երկրի համարյա բոլոր մասերում, բայց այն տարածված է հատկապես Թեհրանի, Ղոմի, Սպահանի, Յազդի և Քերմանի շրջաններում։

Որոշ տվյալների համաձայն Իրանում այդպիսի ղանաթների թիվը կազմում է մոտ 25 հազար՝ ավելի քան 150 հազար կիլոմետր երկարությամբ[5]։ Բա-

---

[4] „Middle East Journal", 1951, № 2, p. 183. ԱՄՆ-ի Գյուղատնտեսության միանիստրության տվյալների համաձայն Իրանում մշակվող հողերի համարյա 30 տոկոսը ոռոգվում է, իսկ ոռոգվող շրջանների առնվազն 70 տոկոսի ջուրը մատակարարվում է ղանաթներից։ (Agricultural Development programs of Iran, Iraq and Sudan by Quentin M. West, Foreign agricultural service United States Department of Agriculture, Washington, 1958, p. 4. Մի այլ աղբյուրում նշված է, որ 1950 թ. ոռոգվող տարածությունների 50 տոկոսը ջուր էր ստանում ղանաթներից, 40 տոկոսը՝ գետերից և միայն մեկ տոկոսը պոմպերով օգտագործվող հորերից։ Oxford Regional Economic Atlas, The Middle East and North Africa, Oxford University Press, 1960, p. 67.

[5] „Journal of the Iran Society", 1951, July, vol. 1, № 3, p. 86.

վական է նշել, որ միայն Քերմանի նահանգում գոյություն ունի ավելի քան չորս հազար ղանաթ, որոնցից մի քանիսի երկարությունը 50 կիլոմետրից ավելի է, իսկ խորությունը 120 մետր[6]։

1960 թ. հոկտեմբերին «Էթթելաաթ» թերթը տպագրել է Սայեղլու հոդվածը, որի մեջ հեղինակը գրում է, թե ղանաթների երկարությունը երբեմն մինչև տասնյակ հազար մետրի է հասնում, իսկ խորությունը մի քանի հարյուր մետրի։ Օրինակ՝ Բոնարադում մինչև 400 մետր խորություն ունեցող ղանաթներ կան։ Հեղինակը նշում է, որ գործող ղանաթներից մեկ վայրկյանում ստացվում է 560 խորանարդ մետր ջուր։ Եթե յուրաքանչյուր ղանաթի դինը միջին թվով մեկ միլիոն ռիալ հաշվենք, ապա Իրանի բոլոր ղանաթների դինը կկազմի 30 միլիարդ ռիալ[7]։

Շարիաթի օրենքներով ջուրը առուծախի ենթակա չէ։ Կարելի է վաճառել միայն այն ջրանցքը, որով ջուրը հոսում է և նրա օգտագործման իրավունքը։ Մուսուլմանական դոգմաների տեսակետից ջուրը բաժանվում է երեք կատեգորիայի. 1. գետերից ստացվող ջրեր, 2. հորերից, 3. աղբյուրներից։ Նույն սկզբունքները պահպանվում են նաև Իրանի «Քաղաքացիական օրենսգրքում», որի 158-րդ հոդվածում ասված է, որ ավելի շուտ մշակված հողը նախապատվություն ունի ավելի ուշ մշակված հողի նկատմամբ։ Իսկ 156-րդ հոդվածում ասված է, որ եթե հնարավոր չէ նախապատվությունը հաստատել, ապա աղբյուրին ավելի մոտ գտնվող հողին տրվում է նախապատվություն՝ ավելի հեռու ընկած հողի նկատմամբ[8]։ Այսպես, օրինակ՝ Մաշհադի մոտ գտնվող Թորուղ գյուղը, որը ջրվում է գետից, կարող է ջուր վերցնել միայն այն ժամանակ, երբ գետին ավելի մոտ գտնվող գյուղերը՝ Մաղանը, Խանրուդը, Արդամեհը իրենց անհրաժեշտ ջուրը վերցրած լինեն։ Այն գյուղը, որն ավելի մոտ է ջրին, վերցնում է իրեն անհրաժեշտ ամբողջ ջուրը, եթե նույնիսկ մյուս գյուղերին ոչինչ չմնա։

Նույնպիսի դրություն է տիրում Քուրդիստանում, որտեղ այդ նախապատվությունը կոչվում է «Հակկե արե»։ Բայց գյուղերին իրավունք չի տրվում նոր պատնեշներ կամ նոր ջրանցքներ կառուցել առանց գետի հոսանքի ավելի ցածր մասում կամ ավելի հեռու գտնվող գյուղի տիրոջ թույլտվության։

Որոշ դեպքերում գյուղերը և հողերը իրենց մոտից հոսող գետի ջրից սահմանված բաժին են ստանում։ Թուրբաթ Հեյդարիի մոտ գտնվող Աբրուդ գյուղում ոռոգումը մասամբ կատարվում է գետի ջրով, որը բաժանված է 21 շարանեռուգի (դիշեր-ցերեկ)։ Ռիզահյեում՝ ամեն մի գյուղ ջրից օգտվելու իրավունք ունի, իսկ բաժանումը կատարվում է ժամերով։ Երբեմն միայն մի գյուղ է իրավունք ունենում օգտվելու գետի ջրից։ Օրինակ՝ Քաշանի մոտ միայն Արիյանեն գյուղը իրավունք ունի օգտվելու իր մոտի գետի ջրից։ Գետի ստորին հոսանքում գտնվող գյուղերը ջրից բաժին չունեն և ոռոգվում են ղանաթներից։

Վարամինի հյուսիսում Կիշլաղ գյուղի մոտով հոսող Ջաջիռուդ գետից գյուղերն օգտվում են ըստ հնից եկող սովորություններին։ Այն է՝ մի շարք գյուղեր իրավունք ունեն այդ գետի ջրից օգտվելու սահմանված չափով, իսկ մյուսները ստիպված են դնել։

---

[6] (اطلاعات) «Էթթելաաթ», 1953 թ. սեպտեմբերի 3։

[7] (اطلاعات) «Էթթելաաթ», 1960 թ. հոկտեմբերի 2։

[8] (قانون مدنی) «Քաղաքացիական օրենսգիրք», Թեհրան, Բաղդադի եղբայրների հրատարակություն։

Գետերն օրենքով պատկանում են պետությանը և նրանց տնօրինումն ամբողջովին իրականացնում է Գյուղատնտեսական մինիստրության ոռոգման բաժինը։

«Իրանի ընդարձակ աշխարհագրությունը» պաշտոնական ձեռնարկի երրորդ հատորում Սեֆիտռուդ գետի մասին ասված է, որ նա ունի մի քանի վտակներ, որոնցից յուրաքանչյուրն ունի հետևյալ վարչական ապարատը։ Սարմիրաբ (գլխավոր ջրպետ), Նաիբ միրաբ (ջրպետի տեղակալ), Աբբանդ (ջրկապ), Սալարջուլ (վտակապետ) և բանվորներ։ Ամեն տարի գարնանամուտին կալվածատերերը Գիլանի նահանգապետարանում մի հանձնաժողով են կազմում, տեղի կալվածատերերից մի «Սարմիրաբ» ընտրում և ջուրը բաժանելու գործում նրան մեծ իրավունքներ վերապահում։ Սարմիրաբը իր հերթին մի տեղակալ է ընտրում, իսկ վերջինն էլ իր կողմից երկու «Աբբանդ» նշանակում։ Աբբանդներից յուրաքանչյուրը 6—10 բանվոր է վարձում։ Նաիբմիրաբը բացի աբբանդներից և բանվորներից, յուրաքանչյուր գյուղի համար նույն գյուղի բնակիչներից մի «Սալարջուլ» է նշանակում, որին վարձատրում են տվյալ գյուղի բնակիչները։ Բոլոր մյուս պաշտոնյաների աշխատավարձը տալիս է սարմիրաբը, որը և իր հերթին ջրից հարկ է գանձում։ Նախապատերազմյան փողով ջրի համար ամեն մի արկղ բրնձից (որը հավասար է 11 մանի կամ 33 կգ) 10—12 շահի հարկ էին վերցնում։ Այդ հարկը գանձում էր սարմիրաբը և մի ներկայացուցիչ՝ նահանգապետի կողմից։ Սարմիրաբի աշխատավարձը 400 թուման էր, բայց 300 թուման էլ ճանապարհածախսի համար էր ստանում։ Տեղակալը ստանում էր 100 թուման, աբբանդներից յուրաքանչյուրը՝ 50 թուման, իսկ բանվորները 35—70 թուման, վեց ամսվա համար[9]։ Բացի ջրի հարկից, գյուղացիները պարտավոր էին ամեն տարի ձրի աշխատել նաև ոռոգման ցանցերում՝ նորոգումների և մաքրումների համար։

Մաշհադի մոտ գտնվող Թորուղի շրջանում գոյություն ուներ մեկ սարմիրաբ, որը ստանում էր ամսական 150 թուման դրամ, տարեկան երեք խարվար (300 կգ) ցորեն, ամսական երեք կգ դարի և 6—9 կգ դարման՝ որպես ձիու կեր։ Սարմիրաբին էին ենթարկվում չորս միրաբ։ Նրանցից յուրաքանչյուրը ստանում էր 33—35 թուման ամսական և չորս խարվար ցորեն տարեկան ու կեր իրենց ձիերի համար։ Այդ կալվածքները վակֆային էին։ Կանխիկ վճարը կատարում էր կալվածքների վարձակալը, իսկ նատուրան պակսեցվում էր ընդհանուր բերքից։

Անհրաժեշտ է նշել, որ բոլոր տեղերում չեն միրաբներ լինում։ Որոշ դեպքերում գյուղացիները իրենք են կարգավորում ջրի բաշխման գործը։

Ջրի հարկերը տարբերվում են երկրի զանազան շրջաններում. Թուրբաթ Հեյդարիի մոտ գտնվող Ղուշաբադում, որտեղ հոսում է Աղքանդ գետը, գյուղացիները վճարում են ըստ հողի միավորի։ Սիստանում, որտեղ ջուրը բավական առատ է, յուրաքանչյուր սադմանից (3,6 հեկտար) պետության օգտին գանձվում է 15 ռիալ։ Յազդի շրջանում յուրաքանչյուր հեկտարի համար անհրաժեշտ ջուրը արժե տարեկան 3 հազար ռիալ, այն էլ ընդունված է գանձել կանխիկ։ Միանդուաբում 1945 թ. 100 քառակուսի մետրի համար գյուղացիները վճարում էին մեկ ռիալ։ Սիստանում մինչև 1948 թ., ինչպես ասվեց, ամեն մի հողամասի համար վճարում էին 15 ռիալ, իսկ այդ թվականից հետո

مسعود کیهان جغرافیای مفصل ایران قسمت ۳ اقتصادی تهران ۱۳۱۱ ص ۷۶ *

դա կրկնապատկվեց, իրը ավելացված գումարը Բանդե Զոհաքում մի ամբարտակի կառուցմանը հատկացնելու համար[10]։

Այն տեղերում, որտեղ ջրի բաշխումը որևէ ոռոգման ընկերության տրամադրության տակ է, հարկերը նույնպես նրա կողմից են գանձվում։ Ընկերությունների կողմից հարկը հաճախ գանձվում է բերքից որևէ մաս ստանալու ձևով։ Շոշում ոռոգման ընկերությունը գանձում է բերքի մի քառորդը, իսկ ավելի վատ հողերից բերքի մեկ հինգերորդ մասը։ Բեհբահանում ոռոգման ընկերությունը վերցնում է՝ աշնանացան բերքի մեկ ութերորդը, գարնանացան բերքի մեկ վեցերորդը և այգիներից ստացված բերքի մեկ հինգերորդ մասը։

Քուրդիստանում նույնիսկ այն դեպքում, երբ գետից անջատվող ջրանցքները ջուր են մատակարարում միայն կալվածատերերի կողմից մշակվող հողերին, ջրանցքները գյուղացիների կողմից մաքրվում են ձրի[11]։

Ինչ վերաբերում է քահրիզներին կամ ղանաթներին, ապա դրանց մասին Քաղաքացիական օրենսգրքում չի նշված։ Այդ հարցին է վերաբերում 1930 թ. օգոստոսի 28-ի օրենքը, որը կոչվում է «Օրենք ղանաթների մասին»[12]։ Օրենքը նպատակ ունի խրախուսելու ղանաթների կառուցումը։ Օրենքի երրորդ հոդվածում ասվում է, որ եթե որևէ մեկը ցանկանա մի նոր ղանաթ կառուցել, կամ նորոգել մի հին ղանաթ և այդ գործը պահանջի հող փորել ուրիշին պատկանող մշակված հողում կամ այգում, ապա վերջինի տերը իրավունք չունի արգելելու այդ, պայմանով որ նախապես մի բավարար գումար վճարվի հող փորելու, ղանաթ կառուցելու կամ ջրամբար «իսթախր» ստեղծելու համար։ Իսկ եթե հողը այնպիսի սեփականություն է, որ օտարել չի կարելի, ինչպես, օրինակ վակֆային հողերը, ապա պետք է բավարար ռենտա վճարվի։ Դեռ ավելին՝ 4-րդ հոդվածում ասված է, որ եթե որևէ մեկը ցանկանա ջրի ղանաթ կառուցել կամ իրեն պատկանող ճահիճը չորացնել, ամբարտակ կամ պատնեշ կառուցել, գետի ջրի մի մասը շեղել և այլն, և այդ գործը պահանջի ուրիշի գույքին տիրանալը, ապա վերջինի տիրոջ հետ, գնելու կամ վարձելու կապակցությամբ համաձայնության չգալու պարագայում, դատարանը որոշում կկայացնի առաջինի օգտին[13]։

Այս հոդվածը, ինչպես տեսնում ենք, բացարձակ սպառնալիք է, որը ստիպում է հողատերերին զիջել բոլոր նրանց, ովքեր կաշխատեն ընդարձակել ոռոգման ղանաթային սիստեմը։

Ջրի չափումը երկրի զանազան մասերում տարբեր հիմքերով է կատարվում։ Ընդհանրապես այն չափվում է ժամանակով, բայց որոշ դեպքերում՝ նաև ջրվող հողի տարածությամբ։ Պաշտոնական չափը «սանդն» է (سنگ), որը նշանակում է որոշակի քանակի լիտր ջուր վայրկյանում։

Ղանաթներից ստացվող ջուրը բաժանվում է տարբեր բաժինների, որոնց թիվը տարբեր է լինում երկրի զանազան մասերում։ Օրինակ՝ Հուվարի ղանաթը մոտ 10,800 բաժին ունի, որը բաշխված է երկու-երեք հարյուր տերերի միջև։ Բաժանումը կատարվում է ըստ ժամերի, իսկ միավորը մի «ֆայնն» է, որը բաղկացած է 20 բոպե հոսող ջրից։ Քաշմարում ղանաթային ջուրը բաժանվում

---

[10] A. K. S. Lambton, Landlord and Peasant in Persia, London. 1953. p. 215.

[11] Նույն տեղում, էջ 216։

[12] مجموعه قوانين موضوعه ومسائل مصوبه دوره هفتم تقنينيه صفحه ۲۰۸—۲۱۰

[13] Նույն տեղում։

է 12 «սահմի» (سهم). այսինքն բաժինների, իսկ դրանցից յուրաքանչյուրը 12 «դանգի», որը կազմում է ընդամենը 144 դանգ։ Քաինաթում, որտեղ հիմնականում ոռոգումը կատարվում է ղանաթներից, տարբեր գյուղերում ջուրը տարբեր ձևով է բաժանվում։ Մի սահմը կամ բաժինը բաղկացած է 24-ժամյա ջրից, որը բաժանվում է 120 «ֆինջանի»[14]։ Քերմանում ջուրը չափվում է «ղասաբով» կամ «ջերիբով», դա հավասար է ջրի այնպիսի քանակի, որ պահանջվում է 25 քառակուսի մետր տարածություն ջրելու՝ 24 ժամվա ընթացքում։ Ղանաթները լինում են ջրառատ և սակավաջուր։ Օրինակ՝ Քերմանի Գոհարրիզ ղանաթը տալիս է օրական մոտ 3000 ջարիբ ջուր[15]։ Գյուղի հողաբաժինների՝ թրքարների քանակը և տարածությունն էլ որոշվում է ջրի բաշխումից։ Այսպես, օրինակ՝ Բիրջանդի մոտ գտնվող Ալիաբադում ջուրը բաժանվում է 14 սահմի, իսկ հողը 7 թրքարի, այնպես որ յուրաքանչյուր թրքար ստանում է 2 սահմ ջուր։ Ամեն տարի թրքարների մեջ վիճակ է հանվում ջրի նկատմամբ նախապատվությունը որոշելու համար։ Բիրջանդի արևմուտքում գտնվող Մասումաբադում ջրի միավորը «ֆինջանն» է, որը ոռոգում է 360 քառակուսի մետր տարածություն, Յազդում «ջուրբեն» է կամ «սաբուն», որը կազմում է 11 բոպեի ջուր, Մեյբուդում դա ներկայացնում է 3,5 բոպեի ջուր, իսկ Աշքիզարում՝ 11,5 բոպեի։

Կալվածատիրական հողերում ղանաթներն էլ պատկանում են կալվածատերերին։ 1929 թ. օրենքը թույլ էր տալիս գրանցել նաև ջրի սեփականությունը։ 1930 թվականին հրատարակված մի շրջաբերականում ասվում էր, որ ջրի սեփականության գրանցումը կատարվում է չորս վերնագրի տակ՝ ղանաթներ, աղբյուրներ, ոռոգման ջրանցքներ և գետեր։ Ղանաթների և կալվածքների ռեգիստրացիան կատարվում էր առանձին։ Տարբեր սեփականատերերի ջրի բաժին ստույգ հայտնի չլինելու դեպքում, գրանցումը կատարվում էր որպես «Հակկե աբե» (حق آبه) այսինքն ջրի մի մասի տեր։

Ինչպես ասվեց, գետերը համարվում էին պետության սեփականություն, ուստի կարելի էր գրանցել միայն ջրից օգտվելու իրավունքը՝ «Հակ-օլ-շորբ» (حق الشرب) որը ամրացվում էր տվյալ կալվածքին։

Որոշ շրջաններում, որտեղ հողը մշակվում է կիսբարային հիմունքներով, յուրաքանչյուր հողակտոր որոշակի իրավունք ունի ղանաթի ջրից օգտվելու համար։ Եթե որևէ մեկը ամայի հողը մշակելի դարձնի, պետք է ջուրը գնի նրանցից, որոնք ջրի ավելցուկ ունեն, կամ էլ այս կամ այն պատճառով պատրաստ են վաճառելու իրենց ջրի բաժնի մի մասը։ Այդպես է օրինակ Արաքի որոշ գյուղերում։

Երկրի որոշ շրջաններում պատահում է, որ հողը և ջուրը տարբեր տերերի են պատկանում։ Օրինակ՝ Իսթահբանաթում և Յազդում։

Ակնհայտ էր, որ ջրի նկատմամբ կալվածատիրական սեփականությունը երկրի գյուղատնտեսության ընդհանուր հետամնացության պատճառներից մեկն է։ «Որոշ շրջաններում,—գրում է Վորթինգթոնը,—ջրի էֆեկտիվ օգտագործմանը խանգարող ֆակտորը կալվածատերն է։ Հատկապես դա այդպես է Իրանում, որտեղ բերրի հողերի մեծ մասը գտնվում է խոշոր կալվածատերերի ձեռքում, որոնցից շատերն ապրում են քաղաքներում և բավարարվում եկա-

[14] A. K. S. Lambton, Landlord and Peasant in Persia, London, 1953, p. 218.
[15] „Journal of the Iran Society", 1951, July, vol. 1, № 3, p. 90.

մուտներ քաղելով իրենց հողից և ջրից՝ առանց հետաքրքրվելու նրանց զարգացման գործով»[16]։ Իսկ թե ջուրը ինչ եկամուտներ է տալիս, կարելի է պատկերացնել հետևյալ փաստից։ Անգլիական մի ժուռնալում հաշվված է, որ ղանաթների տերերը յուրաքանչյուր ղանաթից միջին թվով տարեկան 90 հազար ռիալ եկամուտ են ստանում[17]։

Ղանաթների ջրերի բաշխումը կատարող պաշտոնյան նույնպես կոչվում է «միրաբ», իսկ Սիստանում՝ «արյար»։ Մինչև վերջերս երկու ձևի աբյարներ կային, մեկը նա, որը ջուրը բերում էր գյուղ, իսկ մյուսը՝ որը հետևում էր ջրի բաշխմանը գյուղացիների մեջ։ Նրանք ստանում էին բերքի մեկ ու կես տոկոսը։ Վերջին ձևի աբյարները այլևս չկան և նրանց ֆունկցիաները կատարում են քեդխուդաները[18]։

Նեյրիզում յուրաքանչյուր ղանաթ ղեկավարվում է մեկ կամ մի քանի «սարթաղների» կողմից։ Որպես վարձատրություն նա ձրիաբար ստանում է տարեկան հինգ օրվա ջուր, որը կոչվում է «խամսեհ»։ Այդ օրերն են՝ ապրիլի 20-ը, մայիսի 21-ը, հունիսի 21-ը, հուլիսի 22-ը և օգոստոսի 22-ը։

Ղանաթների մաքրումը մեծ մասամբ տերերի պարտականությունների մեջ է մտնում, իսկ վերերկրյա ջրանցքների մաքրումը՝ գյուղացիների պարտականությունների մեջ։ Բայց Քերմանի որոշ շրջաններում, որտեղ ղանաթների մաքրումը մշտական աշխատողի՝ «մուղանու» կամ «չահքոյի» կարիք ունի, վերջինի օգտին ընդհանուր բերքից 5—6 ման (մանը—երեք կգ) ցորեն է պատկացվում։

1943 թ. մի նոր օրենք անցկացվեց, որը պետությանը ավելի լայն հնարավորություն էր տալիս հսկելու ոռոգման գործին։ Ստեղծվեց Գյուղատնտեսական մինիստրությանը ենթակա ոռոգման մի հիմնարկ, որը կոչվում էր «բոնգահե աբյարի» (بنگاه ابیاری)։ Նախատեսվել էր, որ հիմնարկը պետք է ունենա իր բյուջեն՝ տարեկան մեկ միլիոն դոլարի չափով։ Այդ կազմակերպությունը իբր թե պետք է ոռոգման կառուցումներ կատարեր և պլաններ կազմեր հետագա զարգացման համար։ Հիմնարկի կանոնադրության 5-րդ հոդվածում ասվում էր, որ նա պետք է տեխնիկական օգնություն ցույց տա այն կալվածատերերին, որոնք կցանկանան իրենց հաշվին ոռոգման աշխատանքներ կատարել։ Հիմնարկը պետք է կազմակերպեր տարբեր ընկերություններ ոռոգման և չորացման աշխատանքների համար, որոնց կապիտալը պետք է տրամադրվեր հիմնարկի և կալվածատերերի կողմից։ Կառուցումները ավարտվելուց հետո, եթե կալվածատերերը կամ ուրիշ անձինք ցանկանային պետության բաժինը գնեն, ապա հիմնարկը կառավարության թույլտվությամբ կարող էր վաճառել իր բաժինը, որից ստացված գումարը պետք է կրկին ոռոգման նպատակների հատկացվեր։ Այդ բաժինները գնելու ժամանակ նախապատվությունը տրվում էր կառուցումներից ստացված ջուրը օգտագործող կալվածատերերին։

Ինչպես տեսնում ենք, այս միջոցառումները ամբողջովին կալվածատերերի օգտին էին և ոչ մի բանով չէին փոխում գյուղատնտեսության մեջ եղած ագրարային հարաբերությունները, ընդհակառակը, նորանոր եկամտի աղբյուրներ էին ստեղծում կալվածատերերի համար։ Այդ հիմնարկը ստեղծվելուց հե-

[16] E. B. Worthington, Middle East Science, London, 1946, p. 76.
[17] „Royal Central Asian Journal", 1953, Jan., vol. XL, part 1, p. 55.
[18] A. K. S. Lambton, Landlord and Peasant in Persia, London, 1953, p. 224.

տո, բացի արդեն գոյություն ունեցող ոռոգման ընկերություններից, ինչպես, օրինակ՝ Բեհբահանի ոռոգման ընկերությունը, ստեղծվեցին մի շարք նոր ընկերություններ։ 1948 թ. Իրանական Ադրբեջանում հիմնվեց մի ընկերություն՝ 30 միլիոն ռիալ կապիտալով, որից 10 միլիոնը տրամադրել էր վերոհիշյալ հիմնարկը, 9 միլիոնը՝ Թավրիզ քաղաքի մունիցիպալիտետը և մնացածը՝ մասնավոր անձինք։ Նման ընկերություններ են ստեղծվել նաև 1949 թ. Յազդում՝ մոտ 30 հոր և Քաշմարում՝ 3 հոր օգտագործելու համար։

Ինչպես ասվեց, Իրանը որոշ հնարավորություններ ունի ջրամբարներ կառուցելու համար։ Ոռոգման աշխատանքները կատարում է երկրի տնտեսության զարգացման «յոթամյա պլանի» համապատասխան կազմակերպությունը։ Իրանական կառավարությունը ծրագրել էր 1955—1962 թթ. խոշոր իրիգացիոն շինարարություն իրականացնել երկրի տարբեր շրջաններում։ Եվ իսկապես, վերջին տարիներին որոշ աշխատանքներ են տարվել իրիգացիոն սիստեմը ընդարձակելու և կարգավորելու ուղղությամբ։ Զայենդեռուդի ավազանը Քարուն գետի հետ միացնելու նպատակով կառուցվեց Քուհրանգի ջրանցքը, որի երկարությունն է մոտ երեք կիլոմետր։ Այս ջրանցքով հոսող ջուրը ոռոգում է ավելի քան տասը հազար հեկտար հող։ Ահվազի հյուսիս-արևմտյան մասում կառուցվեց ևս երկու ջրանցք, որոնք ոռոգում են մոտ 80 հազար հեկտար հողատարածություն[19]։ Բացի այդ, երկրի մի շարք շրջաններում ամբարտակներ են կառուցվում, որոնք նույնպես նշանակալի չափով կընդարձակեն ոռոգման սիստեմը։ Այդպիսի ամբարտակներ են կառուցվում Զոհաքում, Միանքանգանում, Գոլփայեգանում, Բամփուրում, Ալվանդում և Սավեյում։ Բացի վերոհիշյալ կառուցումներից աշխատանքներ են տարվում նաև Թեհրանից 40 կիլոմետր հեռավորության վրա գտնվող Քարաջ գետի մոտ մեծ ջրամբարի կառուցման ուղղությամբ, որը ոչ միայն կապահովի մայրաքաղաքի կարիքները, այլև կոռոգի ավելի քան 15 հազար հեկտար հողամաս։ Այսպիսով, վերոհիշյալ ավարտված ջրամբարները ոռոգում են մոտ 200 հազար հեկտար տարածություն։

Ինչպես տեսնում ենք, ոռոգումը մնում է ժամանակակից Իրանի կարևոր պրոբլեմներից մեկը։ Չնայած վերջին տարիներին որոշ աշխատանքներ են տարվել ոռոգման ցանցերը ընդլայնելու ուղղությամբ, այնուամենայնիվ ջրի պակասը գյուղատնտեսության հետագա զարգացման գլխավոր արգելքներից մեկն է։ Դա իր արտացոլումն է գտնում նաև Իրանում գերիշխող կալվածատիրական հողատիրության և ընդհանրապես ագրարային հարաբերությունների մեջ և, միաժամանակ, էլ ավելի ուժեղացնում գյուղացիական հոծ զանգվածների ֆեոդալական շահագործումը։

[19] J. Goel, B. Talegani. Iran Develops its Rivers, 1955, p. 49—53.